# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ _92__

«__21_» փետրվարի--- 2018թ.

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ***
***ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ***

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի` Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ավագանու 2018թվականի փետրվարի12 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին N 5 -Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն` պետական իրավական փորձաքննության:

Առդիր` 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.37/2888-18
22 02 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

12 փետրվարի 2018 թվական — թիվ 5-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. ՕԶՄԱՆՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 2. Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 3. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 4. Ռ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 5. Ժ. ՔԱՆԴՈՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 6. Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 7. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| 8. Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/ Պ [signature] Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

12 փետրվար 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12 -Ի
N 5 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Սարդարապատ համայնքի 2017թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 24994,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 24925,8 հազար դրամ կամ կատարվել է 99,7 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 16355,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 16357,6 հազար դրամ կամ կատարվել է 100,0%-ով:

2, Գույքահարկի պլանով նախատեսված 8019,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 7945,0 հազար դրամ կամ կատարվել է 99,1 %-ով:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 620,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 623,2հազար դրամ կամ կատարվել է 100,5 %-ով:
,այդ թվում

1. Տեղական տուրքերի գծով նախատեսված 620.0հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 623,2հազար դրամ կամ կատարվել է 100,5 %-ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 3650.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքա•րվել է 3603,4 հազար դրամ կամ կատարվել է 98,7%-ով, այդ թվում՝

1. գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 450.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 475,0 հազար դրամ կամ կատարվել է 105,6%-ով:

2,տեղական վճարների գծով նախատեսված 3200,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 3128,4 հազար դրամ կամ կատարվել է 97,8%-ով:

## 4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) ախատեսված 94303.0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 94303,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0%-ով:

Սարդարապատ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումը նախատեսված 25664 հազար դրամի դիմաց կատարվել է 25664,0 հազար դրամ:

Սարդարապատ համայնքի 2017թ. վարչական բյուջեով նախատեսված 122947,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 122832,2 հազար դրամ կամ կատարվել է 99.9. %-ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

Սարդարապատ համայնքի 2017թ. բյուջեն ընդամենը նախատեսված 122947,8.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 122832,2 հազար դրամ կամ կատարվել է 99,9 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 28644,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 28529,3 հազար դրամ կամ կատարվել է 99,6 %-ով:

## ԾԱԽՍԵՐ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1. Սարդարապատ համայնքի 2017թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր

բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 38056,6հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 35830,4 հազար դրամ կամ կատարվել է 94,2 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման 04բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2000.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1965,0 հազար դրամ կամ կատարվել է 98,2%-ով:

3.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 4815,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4814,9 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

4.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 18078.2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 15926,8 հազար դրամ կամ կատարվել է 88,1 %-ով::

5.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 4633,2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4292,6 հազար դրամ կամ կատարվել է 92,6 %-ով:

6. Կրթություն ծախսերի գործառնական դասակարգման 09բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 14200.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 13674,9 հազար դրամ կամ կատարվել է 96,3 %-ով:

7. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 15000,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 15000,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:
8.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդովնախատեսված 500,8հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել

2017թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 97283,8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 91504,6 հազար դրամ կամ կատարվել է 94,1 %-ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2017թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 27582,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 27582,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով, այդ թվում՝

1. ա) տեղական ինքնակառավարում ՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 6873,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 6873,0հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

2. .Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված

17682,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 17682.0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով::
3. Կրթություն ծախսերի գործառնական դասակարգման 09բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 3027,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3027,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

## ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԸ

Սարդարապատ համայնքի բյուջեի փարեվերջի մնացորդը նախատեսված 1918,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 5675.8 հազար դրամ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12 -Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 5 - Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ավագանու 2018թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 5-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, ինչպես նաև 83-րդ հոդվածի պահանջներով՝ միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ավագանու 2018թվականի փետրվարի 12 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 5 -Ն ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ